Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿՅԱԼ ՆԱԽԱԳԱՀ ՏԻՐ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

(21 մայիսի, 2020 թ.)

Մեծարգո պրն. Սահակյան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքները։

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի պաշտոնում Ձեր գործունեության ավարտին առիթ ունենք դրվատանքով անդրադառնալու Ձեր անձնվեր հանձնառություններին, հանուն Արցախի զորացման Ձեր գովարժան իրագործումներին։

Արցախյան ազատամարտի տարիներին Դուք հոգու կանչով համալրեցիք կամավորների բանակը՝ պաշտպանելու հայրենյաց հողը։ Ստանձնելով կարևոր պաշտոններ Պաշտպանության Բանակում և ուժային կառույցներում՝ նշանակալի ավանդ բերեցիք Արցախի փառավոր հաղթանակի կայացմանը։ Տարիների Ձեր վաստակի գնահատանքով արցախահայությունը Ձեզ վստահեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի պատասխանատու պաշտոնը, որը Դուք ընդունեցիք որպես մեր ժողովրդին ավելիով ծառայելու աստվածաշնորհ հնարավորություն՝ ձեռնամուխ լինելով Արցախի առջև ծառացած մարտահրավերների լուծմանը, հայրենի երկրի հզորացմանն ու շինությանը։

Մեզ համար մեծագույն ուրախություն են եղել Հայրապետական Մեր այցելությունները Արցախ, որոնց ընթացքում գոհունակությամբ հաղորդ ենք դարձել Ձեր հայրենասեր ու ազգասեր ոգուն, զգացել աննվազ նախանձախնդրությունը՝ բազմապատկելու ազատագրական պայքարի հաջողությունները՝ հանուն առավել լուսավոր ապագայի։ Գոհունակություն է նաև հաստատել, որ Դուք՝ որպես Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նվիրյալ զավակ, մշտապես զորակցություն եք բերել Արցախի թեմի առաքելությանը, սատարել հնամենի մեր վանքերի նորոգությանն ու եկեղեցիների կառուցմանը՝ ի խնդիր արցախահայության հոգևոր կյանքի վերազարթոնքի։

Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության, վստահ ենք, որ Ձեր կարողություններն ու տարիների փորձառությունը պիտի շարունակեք ներդնել հանուն աստվածապարգև մեր հայրենիքի առավել շենացման ու պայծառության։

Ի խորոց սրտի աղոթքով հայցում ենք Տիրոջ մշտական խնամքն ու զորակցությունը Ձեզ և ամենախնամ հովանին Ձեր ընտանիքին։ Մաղթում ենք Ձեզ քաջառողջ արևշատություն, հայրենաշեն գործոց նորանոր հաջողություններ, երկնապարգև ամենայն բարիք։

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ